ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են Պետական տուրքի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Դատարանը, արձանագրելով, որ հայցվորը նախապես վճարել է սահմանված պետական տուրքի գումարը, ինչպես նաև նկատի ունենալով, որ հայցը ենթակա է մերժման, գալիս է այն եզրահանգման, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Անդրադառնալով կիրառված հայցի ապահովման միջոցի հարցին՝ Դատարանը գտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը վճիռ կայացնելիս լուծում է հայցի ապահովման միջոցները պահպանելու կամ վերացնելու հարցը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցը մերժելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Դատարանը, նկատի ունենալով, որ հայցն ենթակա է մերժման, գալիս է այն եզրահանգման, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 13.04.2026 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պետք է պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը, վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո պետք է այն վերացնել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. ՁԻԷՅ ԳՐՈՒՊ ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲ ընկերության՝ «Երևանի ՋԷԿ» ՓԲ ընկերության՝ «ՁԻԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 18.12.2025 թվականին կայացված թիվ 5 (ԳՊ/449-2025) որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել, հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 13.04.2026 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը, վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո այն վերացնել:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Աննա Ճիլաջյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IEF8-6DAE-4798-9AFF հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am